

Սեղանին վրայ դատական գառին քով կը դրուէին նաեւ, ա) դառն խոտեր, զոր օրինակ՝ ջրկոտեմ ու ազատքեղ, իբրեւ յուշարար Իսրայելեան ժողովուրդի Եգիպտոսի մէջ կրած դառնութիւններուն: Բ) բազարջ հացի նկանակներ, որոնք կը յիշեցնէին թէ Իսրայելացիք իրենց հապճեպ մեկնումին պատճառաւ ժամանակ չէին ունեցած հացի խմորուելուն սպասելու, եւ գ) համեմ մը, հազորեք կոչուած, որ զանազան պատուներու խառնուրդ մըն էր, աղիւսագոյն, որ կը յիշեցնէր Փիտոն եւ Ռամաէս բուրգերուն չազալը: Սեղանին վրայ երբեմն կը դրուէին նաեւ դատական գառին հետ միասին եփուած ու օրհնուած ուրիշ միսեր:

Ընտանիքին հայրը գոհանալով Աստուծոմէ՝ հազորեքին մէջ կը թաթխէր դառն խոտը, զոր կը ճաշակէին բոլոր սեղանակիցները:

3. Երրորդ բաժակը. —

Ապա երրորդ բաժակ մը կը լեցնէին, ու ներկաներէն ամենէն պղտիկը կը խնդրէր ընտանիքի հօրմէն որ բացատրէ այս ծէսին նշանակութիւնը: Վերջինս՝ ամենայն լըջութեամբ՝ մէկիկ մէկիկ վեր կը բարձրացնէր սեղանին վրայի ուտելիքները եւ կու տար պէտք եղած բացատրութիւնները — Գառը զինուած էր ողորդելու համար աստուածային բարկութիւնը ու յիշեցնելու համար մահուան հրեշտակին անցքը Իսրայելացւոց տուններուն վրայէն, առանց սակայն պատժելու զանոնք (Պատկ կը նշանակէ «անցք»): Բազարջը՝ վիշտի կամ տրտաւոյցի հացը՝ կերուած փախուստի ժամանակ, եւ դառն խոտերը՝ յիշեցնող եգիպտական տաժանագին ծառայութիւնը: «Այս հրաշքներուն համար է որ, կ'ըսէր ան, պէտք է օրհնենք եւ փառաւորենք զԱստուած որ մեր արցունքը ուրախութեան փոխեց ու խաւարը լոյսի վերածեց: Անոր միայն երգենք Ալեկուիս»: Այն ատեն բոլոր սեղանակիցները կը հնչեցնէին Հալլէլի երգու առաջին Սաղմոսները (ծժԿ-ծժԴ), որ կը սկսին «Հալլէլու — Եահ = Օրհնեցէք Եհովան» բառերով ու կը հռչակեն ճշմարիտ Աստուծոյ զօրութիւնը ու այն սքանչելիքները, զորս ցոյց տուաւ Եգիպտոսէն իրենց մեկնելու ատեն:

Այս սաղմոսերգութեան պահուն կը խմէին երկրորդ բաժակը: Ապա ընտանիքի հայրը կը բեկանէր եւ կ'օրհնէր ու կը բաժնէր բազարջը, տառապանքի հացը, որմէ ամէնքը մէյմէկ պատառ կ'ուտէին, դառն խոտերով փաթթելէ ու հազորեքին մէջ թաթխելէ յետոյ: Զատեական Ընթրիքի այս պահուն էր որ Յիսուս բեկանեց հացը ու բաժաւ. «Առէք, կերէք, այս է մարմին իմ, որ վասն ձեր եւ բազմաց բաշխի, ի քաւութիւն եւ ի թողութիւն մեզաց»:

4. Երրորդ բաժակը. —

Ընտանիքի հայրը ապա երրորդ բաժակ մը կը լեցնէր, «օրհնութեան կամ գոհութեան բաժակը»: Այս էր զոր Յիսուս իր աստուածային արիւնին փոխարկեց ըսելով. «Արէք ի սմանէ ամենեքեան, այս է արիւն իմ նորոյ ուխտի, որ վասն ձեր եւ բազմաց հեղանի, ի քաւութիւն եւ ի թողութիւն մեզաց»:

Այս երրորդ բաժակը խմած ատենին կ'երգէին Հալլէլի վերջին Սաղմոսները, «Մի՛ մեղ, Տէր, մի՛ մեղ, այլ անուան քում տուր զփառս: ... Օրհնեցէք զՏէր ամենայն ազինք, զովեցէք զնա ամենայն ժողովուրդք: Զօրացի ողորմութիւն նորա ի վերայ մեր, եւ ճշմարտութիւն Տեառն մընտացէ յաւիտեան. Ալէլուիա»:

Զորրորդ բաժակ մըն ալ, որ ձեռքէ ձեռք կ'անցնէր եւ որմէ մէյմէկ ումպ միայն կը խմէին, ցոյց կու տար ընթրիքին աւարտիլը: Բազմականներու փափաքին վրայ կ'արկի էր հինգերորդ բաժակ մըն ալ աւելցնել, պայմանաւ որ սեղանը վերջանար մեծ Հալլէլի՝ այսինքն ձի—ձիէ Սաղմոսներու երգեցողութեամբ:

Հայացուց՝ Մ. Ե. Ն.

ԽՈՐՀԱՆՈՒՐԴ ԵՒ ԽՈՍՏԳ

Բարոյակամ գեղեցկութիւնն է միայն որ կարող է մեծ, խորունկ եւ անկեղծ սիր մը ներշնչել:

*

Իմաստութիւնն ու սիրը, հասկացողութիւնն ու կասկը, անսւ սցն ճիւղերակամ գեղացոյն ոյժերը, որոնց առջեւ յաջողութեան դռները կը բացուին: